

ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԱՆՏԻՊ ԷՋԵՐԻՑ

Սկսվել է Ավ.Իսահակյանի երկերի լիակատար ժողովածուի ակադեմիական հրատարակությունը, որն ամփոփելու է հայ դասականի գրական ողջ ժառանգությունը: Նրա զգալի մասը գրական հանրությանն է ներկայացվելու առաջին անգամ: Սրանք քնարական բանաստեղծություններ են, ավանդավեպեր, մտորումներ, արձակ էջեր, որոնք բացահայտում են բանաստեղծի հոգեկան փոթորկուն աշխարհը: Վերջապես առանձին հատորներով լույս է տեսնելու Իսահակյանի հանրահայտ «Ուստա Կարո» վեպը՝ իր երկու տարբերակով:

Անդրադառնալով իսահակյանական մի քանի անտիպ նյութերի:

Ինչպես հայտնի է, 19-րդ դարի վերջերից սկսված արևմտահայության ջարդերը Արևելահայաստանում սկիզբ դրեցին ազատագրական-հայրենասիրական ընդհատակյա շարժման, որին զինվորագրվեցին և գործում մասնակցություն ցուցաբերեցին նաև հայ մտավորականներ, այդ թվում՝ Ավ.Իսահակյանը, Ավ.Մալոյանը (Ավո), Ստ.Տեր-Ստեփանյանը, Ս.Տեր-Սիմոնյանը, Լ.Գյուլումյանը, Գ.Ուրեկյանը և այլք: Նրանք անմիջապես վերցվում են ցարական ժանդարմերիայի հսկողության տակ: 1896թ. Իսահակյանը բանտ է նետվում, սակայն այս հանգամանքն ավելի է բորբոքում նրա ազատասիրական զգացումները: Բանտում արված նրա գրառումներից երևում է, որ ժողովրդի ցավերով ապրող զգայուն բանաստեղծը չի կարող վայելել անհոգ կյանքի հաճույքները՝ ի տես ժողովրդի արյուն-արցունքի, տիրող բռնությունների և ոսկու ամենաթող իշխանության: Նա գործունեության հետագա ծրագրեր է մշակում՝ մեկը մյուսից հանդուգն ու համարձակ: «Առաջին և վերջին գործս պիտի լինի, - գրում է նա բանտում, - շա՛տ լավ ուսումնասիրել մեր հեղափոխությունը, հայոց պատմությունը, գրականությունը, ժողովրդին, պիտի դուրս գամ ազգային բանաստեղծ, արտահայտիչ էպոսայի, մարգարե, առաքյալ...

Շա՛տ և շա՛տ մոտ զգալ հայկական հարցը, դատը...»¹:

Եվ նա, քաղաքական գործունեությանը զուգընթաց, գրում է նաև ֆիդայական շարժմանը և նրա գործիչներին նվիրված, ոգիները թունդ հանող երգեր, որոնք ընթերցողի մեջ արթնացնում են վեհ գաղափարներ:

Իսահակյանը հոգեկան ու գաղափարական ամուր թելերով է կապված իր մարտական ընկերներին, որոնք «աուրբ, վեհն ցնորքով» պատրաստ են նետվելու մարտադաշտ, և որոնց կորուստը ցավագնորեն է

արձագանքվում բանաստեղծի հոգում: Իր օրագրային նշումներում նա վկայակոչում է հայ ազատագրական շարժման՝ եվրոպական մամուլի արձագանքները, ըստ որոնց՝ «...հայ հեղափոխականները՝ ճշմարիտ հերոս-մարտիրոսներ, նոր կյանքի առաքյալներն են...»²:

Նա խնկարկում է իր գոհված ընկերների սուրբ հիշատակը, բայց և համոզված է, որ «ընկնողի արյունը հուր կդառնա դեռ մարտնչողի սրտում, ընկնողի գերեզմանը վերք կլինի դեռ մարտնչողի սրտում»³: Ահա իր հերոս ընկերներին ձոնված բանաստեղծական և արձակ մտորումներ, որ տպագրվում են առաջին անգամ՝ ինքնագրից.

*Ո՛վ ազատություն, դու տիեզերքի
Արև կենարար, վեհ ազատություն –
Ոգիներն ամեն ըմբոստ ու հզոր
Թիթեռների պես՝ չքնաղ, զվարթուն
Ճախրում են, սուզվում քո մեջ սիրավառ
Եվ բորբոքում են հուրդ նորենոր
Իրենց այրումով – ոգիներն հզոր...
Հարգանք ձեզ հավերժ, անմահ հերոսներ,
Հարգանք ձեր արյան վեհ տանջանքներին
Եվ փառք հավիտյան ձեր անուններին –
Ձեր շիրիմները՝ սուրբ ու կենսատու,
Ազատությունը հաղթական ու վեհ
Արծվի թռիչքով թևավորի մեզ,
Եվ արևները – վառեցեք բոլոր... ⁴*

Նրանք չեն մեռել, նրանց հողեղեն մասը հող է դարձել, բայց նրանց հոգիները կան և սավառում են մեր գլխու վերև՝ Մասըսա շուրջը: Գնանք, կռիվ, նրանք մեզ հետ են, մեր առաջը: Մեռնենք և արժանի լինինք նրանց հոգիների հույլի մեջ, աստղերի մեջ ճախրելու, ազատ, ավելի ազատ, քան ինքը՝ ազատ արծիվը:

Մեռե՛ք, մեռե՛ք ու մի՛ զղջացեք. ամենալավ, ամենավեհ բանը աշխարհում գոհվելն է, նվիրվել, նահատակվել սրբությունների համար»⁵:

Նվեր իմ ընկերներին

Իմ սիրելի ընկերներ, բյուր-հազար մարդկանց հետ ապրում ենք երկրի վրա, բայց մենք օտա՛ր ենք նրանց համար, նրանց սրտերը փակ են մեզ համար:

Խռոխ ու խոժոռ հայացքներով նրանք նայում են մեզ ու անցնում, գնում... Նրանք չգիտեն, թե մենք ով ենք, ուրտից կուգանք, ուր կերթանք և ինչ ենք ուզում... Նրանք այդ չեն էլ ցանկանում իմանալ, բայց ի՞նչ – թո՛ղ չիմանան. չէ՞ որ մենք ենք այն մեծ ու հզոր կրակը, որ բխելով տիեզերքի սրտից՝ տանում ենք վեհ ու խորին կյանքի արյունը դեպի այդ բյուր-հազար մարդկանց սրտերը: Այդ մարդկանց մենք մի նո՛ր կյանքով վառում ենք, այդ մարդկանց մենք իրար հետ կապում ենք:

Այդ բոլոր մարդկանց մենք մասնակից ենք անում տիեզերքի մեծ կյանքին: Բայց մենք օտար ենք նրանց համար, նրանք գոց ու փակ են մեզ համար, և մենք մեռակ ենք այդ բյուր-հազարի մեջ:

Եվ մենք՝ որպես ծովի հուզված ալիքների, դուրս հոսեցինք ափերից, հեռու՝, անհայտ անկյուններից իրար հանդիպանք, իմ ընկերներ, իրար ճանաչեցինք, միացանք իրար հետ և միասին գնացինք... Վերջը դարձյալ թափվեցինք ծովը... և ծովն է ժողովուրդը, և նրա կյանքը կատաղի կոիվ է: Այս մարտի դաշտում սե՛ր չկա, ո՛չ ոքի կուրծքը անկեղծ չի բախում ուրիշի համար, խորին մռայլն է այնտեղ փռված, այնտեղ զոհի, տանջվողի, զրկվողի վրա է բախտավորների երջանկությունը բազմած:

Եվ այսպե՛ս, իմ սիրելի՛ ընկերներ, կամ թո՛ղ մենք միասին միշտ հոսենք մեր ընթացքով ծով – ժողովրդի մեջ, նրա խորքով ու վրայով, երգենք միասին վեհության ճոխ երգերից, երազենք սուրբ, վսեմ ցնորքներով և տանջվենք մաքուր, բարձր վշտերով և նրանց սիրտը վառենք մերի հետ, հալենք մերի մեջ:

Կամ թո՛ղ մենք բարձրանանք երկինք, լինինք մռայլ-ամպեր, որոտումով ահեղ կայծակներ թափենք երկնուց ծով-ժողովրդի խորքը, հուզենք, մրդկենք նրան. այդ հուզմունքից կմաքովի ծով-ժողովուրդը, մեխված, հոտած դի ու գեշերը իրենից հեռու՛, հեռու՛, հեռու՛ կշարտեն...

Կամ թո՛ղ բաժանվինք իրարուց, մի՛շտ բաժանվինք, հեռանանք հեռու՛ ափեր, անժանոթ վայրե՛ր, բայց միշտ ապրինք իրար սրտերի մեջ և այդ նվիրագործենք մեր վեհ երգերի, ցնորքների ու վշտերի անմոռաց զգալով ու հիշատակով...

Է՛յ, վա՛խ, իմ ընկերներ, անհայտ է ապագայի միտքը, խորհրդավոր է նրա դեմքը - գնա՛նք անվախ առաջ, լո՛ղ տանք, թոճե՛նք մեր քախտի կամքով...

Գիտե՛նք -- կռվի դաշտն է մեր առջև փռվելու. թո՛ղ որ փռվի, և ով որ մեզմից ընկնի ապագայի՝ մեր աներևույթ թշնամու հարվածից, թո՛ղ ընկնի, թո՛ղ որ կռքի նրա գերեզմանը. չէ՞ որ մերոնցից կան դեռևս - և մենք կանք, մենք միշտ կապրինք իրար սրտերի մեջ, և ընկնողի արյունը հուր կդառնա դեռ մարտնչողի սրտում, ընկնողի գերեզմանը վերք կլինի դեռ մարտնչողի սրտում: Մեր մարտնչողների սրտում կլինի մեր ընկերների սուրբ գերեզմանը:

Է՛խ... եթե մեր ուղիները տարիներ հետո իրար դիպնին, և մենք հանդիպենք իրար և մենակ լինինք, հաղթված, թույլ ու հիվանդ, է՛հ, թո՛ղ որ լինինք. մենք անհուն կարոտով կգրկենք իրար, կհամբուրվենք ու կարտասվենք... և միասին կթափառենք: Մենք նորեն կերգենք մեր հին, վեհ երգերը, նորեն կտանջվինք մեր հին վշտերով, նորեն կթևավորվինք մեր հին ցնորքներով - և այդպես կթափառենք երկրի ոլորտում, կորոնենք մեր կորած ընկերներին, կորոնենք նրանց սուրբ ոսկորները...

Ա՛խ, մենք լավ գիտենք, որ մարդիկ շնչող ժայռեր են, որ ոչ ոք չի ցավում ուրիշի ցավով, ուրիշի ջերմով ոչ ոք չի ջերմում - և մենք էլ անտուն ենք, խեղճ ու անպաշտպան...⁶ Բայց թո՛ղ այդպես լինինք: Անհուն սիրով ամուր կգրկենք իրար, հոգնած գլուխներս կթեքենք մի ժայռի կտորի, մի ծառի արմատի վրա և բյուր - հազար մարդկանց մեջ մենակ՝ մենք միասին կջերմենք բոլոր մարդկանց ջերմով, նրանց վշտով կտանջվենք և կապրենք տիեզերքի մեծ կյանքով...

Օ՛, իմ անգին ընկերներ, ճշմարիտն եմ ասում, այդ է մեր իսկական փառքը:

Եվ ահա՛ այսպես առա՛ջ գնանք, իմ սիրելի ընկերներ, և մեր վեհ, վսեմ ցնորքներով սլանա՛նք...

Իր սրտում փոթորկվող ծովի շառաչն ու եռքն ամբարած բանաստեղծը իրեն իրավամբ կոչված է զգում հնչեցնելու. «անհագ վրեժի, ըմբոստացման, բուռն ցասման» ու բողբոջի համարձակ կոչը և կարդալու ճշմարտության քարոզը՝ հարստահարվածի բռունցքում դնելով «ահեղ ճշմարտի սուրը»: «Ես պիտի նստեմ Մասիսի ստորոտին, - կարդում ենք նրա փիլիսոփայական խտացումներից մեկում, - գլխիս մոխիր ցանեմ և լամ, լամ՝ նզովելով ամբողջ աշխարհը, բարեկամ-թշնամի, և ամեն հայի սրտում վառելով վրեժի օճ և թույն»⁶:

Չարի ու բռնության դեմ վրեժ ու դի սերմանող Իսահակյանի ոգուն, սակայն, անհարիր է հռոնտեսությունն ու համապարփակ ատելությունը. նա չունի «Ուստա Կարո» վեպի հերոսներից մեկի՝ Օրթե Հարութի «Հեշի»՝ ամեն ինչ մերժող, մռայլ ու ժխտողական աշխարհայեցողությունը: Իսահակյանը խոսում է ժողովրդի անունից և հանուն ժողովրդի: Իրականության նրա բացասումը դրական արմատներ ունի, և ինչպես Հովհ. Թումանյանը, Իսահակյանը նույնպես կարող էր ասել, որ իր «զայրույթը լիքն է սիրով...»⁹: Որպես ասվածի վկայություն՝ մեջբերենք բանաստեղծի արխիվում պահպանվող անտիպ բանաստեղծության մի հատված.

*Բացեր դարպասներն ձեր պալատների,
Ոգու հարության լույսն եմ ձեզ բերում.
Ես փոթորիկն եմ ամապատների,
Ես՝ օձ – կարիճը մռայլ ամպերում:
Փշրեցե՛ք շղթան ձեր ծառաների
Եվ ձեր տերերի թագը ոգեսպան. –*

*Ես ավետում եմ վեհության աշխարհը
Եվ ազատության ծաղկավառ գարուն <...>¹⁰:*

«Ահեղ չարիքի երկաթ բռունցքի» տակ հեծող իր ժողովրդի ապագայի հանդեպ լույսի ու ճշմարտության լավատես հավատով է տոգորված նաև մեկ այլ անտիպ բանաստեղծություն, որի բնաբան է ընտրված Ֆիրդուսու միտքը՝ «Նույնիսկ խավար Ահրիմանը վերջը պիտի հավի լույսի մեջ (նկատենք, որ բանաստեղծության մեջ կիրառված ուղիղ փակագծերը՝ / /, հեղինակին են).

*Սրտերը մարդկանց ապառաժ ու քար
Գուլ պատնեշներով շուրջս են կանգնած.
Եվ քարայրի պես՝ երկինքը խավար
Ծանր ու հեղձիչ կրծքիս է չոքած.
Եվ որ մեռելի բաց – պաղ աչքի պես
Համր սարսափով իմ սրտի դիմաց
Աշխարհն է ընկել – /խո, մռայլատես /,
Եվ բյուրալեզու չարիքն է ահեղ
Բռունցքով երկաթ իշխում ամեն տեղ:
Բայց աչքը հոգուս տեսնում է մի լույս
Հեռու, հեռավոր ափերում վայրի...
Դեռ սեր կա իմ մեջ, հավատ և վատ հույս,
Կթռչեմ այնտեղ, թող սիրտս այրի*

*Լույսով հրեղեն... / քայց ծանր է ուղիս /,
Դժխեն, խաղ – խափար. / ոտներս՝ տկար /
Եվ արյունոտված փշերից դաժան,
Բայց ծարավ, մոթի, անքուն, վաստակած,
Եվ կուրծքս տապից, որպես մի իժից
Խաթված ուժգին՝ խեղդվում է հիմա.
Առաջ, անհողողող և գոտեպնդվիր –
Դեռ սեր կա քո մեջ և հավատ, և հույս.
Թե էության մեջ բացարձակ, անմահ
Խավարը վերջունյն լույս պիտի դառնա...¹¹*

Որպես իրեն համակած այս հախտոմն ու ըմբոստ տրամադրությունների արտահայտություն՝ Իսահակյանն իր առաջին բանտարկության ժամանակ՝ 1896թ. հուլիսին, անում է մի նոթագրություն՝ «Դ-ո՞ք ինձ ասում եք. «Տոկա՛լ սովորիր...» սկսվածքով, որ հրաքիսի բուռն ժայթքում է հիշեցնում: Այն ներքին հանգավորում ունեցող մի արձակ բանաստեղծություն է, ճիշտ ինչպես Հովհ. Թումանյանի «Մուտիկ որսկանը» հեքիաթը (նկատենք, որ այս հեքիաթի մախնական մշակումը չափածո է եղել) կամ Մ. Գորկու մի քանի արձակ բանաստեղծություններ, որոնք, շնորհիվ շեշտերի կայուն դասավորության, հեշտությամբ են ընկալվում և մտապահվում: Ի դեպ, այս ստեղծագործությունները թարգմանելիս Ն.Չարենցը տողատել է դրանք՝ վերածելով չափածոյի: Ավելացնենք, որ մույն կերպ է վարվել մահ գրականագետ Ն. Գոնչարը, որի ջանքերով Հայաստանում արտատպված Անդրեյ Բելիի «Армения» գրքի¹² մի քանի ռիթմիկ հատվածներ մա վերածել է չափածոյի:

Վերադառնանք, սակայն, Ավ. Իսահակյանի գրառմանը, որից հառնում է բանտված բանաստեղծի ազատատենչ էությունը, որին խորթ են աշխարհի կեղծ ու պատիր օրենքներն ու սրբությունները: Նրա փոթորկվող ոգին ձգտում է փշրել ամեն տեսակ բռնություն ու շղթա: Երիտասարդ բանաստեղծը գերմարդկային ուժ է զգում իր հրեղեն երգով, որ «աստղերով հյուսած, ծիածանով կապված, արշալույսով ցողված մի փունջ է»¹³, վշտի ու ցավերի տակ հենող ժողովրդին ամոքելու և դուրս բերելու դեպի փրկարար հորիզոններ: «Ամեն տեղ պիտի թափառե իմ հենին, - այս կապակցությամբ գրում է մա 1896-ին, - և ամեն տեղ պիտի էմ սև-սև ամպերի միջից կայծակ տա - վեհության երգը երգե...»¹⁴:

Այս մտքերը երկար ժամանակ հանգիստ չեն տալիս բանաստեղծի խոռոված հոգուն, և իր վերոհիշյալ գրառումը մա մեկ տարի անց՝ 1897թ., Ալեքսանդրապոլում որոշում է թեթև շտկումներով վերածել բանաստեղծու-

բայան: Ընթերցողի ուշադրությանն ենք ներկայացնում այս գրառման արձակ
և չափածո մշակումները, վերջինս՝ սևագիր տարբերակով:

Դո՛ւք ինձ ասում եք. «Տոկա՛լ սովորիր ու կյանքի խաչը անտրտունջ
տա՛ր և սուրբ սեղանի առաջ դո՛ւ խոնարհ սրտով ծունկ չդքի՛ր»:

Դո՛ւք սրբությանն եք անհուն հավատում ու նրա անվամբ դո՛ւք
կամենում եք ինձ լռեցնել, ձեր կյանքից տալ ինձ: Օ՛, ես չեմ ուզում ձեր
անմիտ կյանքը, ձեր սրբությունը վաղո՞ւց բոց չունի:

Ա՛յս, թողե՛ք թռիմ, թևերս տվե՛ք ինձ, մութն անապատը փռե՛ք
ոտքիս տա՛կ. կատաղած ջրվեժի վայրենի երգը ես կուզեմ լսել, և թո՛ղ իմ
սրտում ջրվեժի նման զայրույթս շաչե՛, սիրտս դողա՛, վրեժս գոչե՛:

Ես կուզեմ լինել կատաղի ոգի՝ կայծակե սուրը ձեռքումս բռնած, ես
կուզեմ կրծքիցս փնչել հողմ, կրա՛կ, ես կուզեմ կյանքը նիռին ոտքիս տա՛կ:

Կայծակե սուրը ձեռքումս բռնած՝ պատառնեմ մարդկանց քարե
սրտերը, ոտքիս տակ ձգեմ մարդկանց սրտերը:

Թո՛ղ իմ հայացքը սրտերի արյան կարմիր ցուքերից մի լույս
ստանա: Ես կուզեմ ժպտալ վայրենի ժպիտով, ու իմ աչքերում արցունքը
շողա - վայրենի՛, բոցոտ արցունքը...

*Դուք ինձ ասում եք - «Տոկա՛լ սովորիր,
Եվ կյանքի խաչը լուռ, անտրտունջ տար.
Եվ սուրբ օրենքների սեղանի առաջ
Դու խոնարհ սրտով ծունր խոնարհիր...»:*
*Դուք հնությանն եք անհուն հավատում
Եվ նրա անվամբ դուք կամենում եք
Ինձ լռեցնել – ձեր կյանքից տալ ինձ.
Օ՛, ես չեմ ուզում ձեր անմիտ կյանքը,
Ձեր սրբությունը վաղուց բոց չունի:
Ես թևեր ունիմ, կրթռնիմ ահա,
Մութն անապատը փռվեց ոտքիս տակ...
Բռնեմ մրրկի երգերը վայրագ
Ես կուզեմ լսել:
Եվ թող իմ սրտում մրրկի նման
Ջայռույթս շաչե, կամքս դողա.
Ես կուզեմ ժպտալ վայրենի ժպտով,
Ես կուզեմ լինել կատաղի Ոգի՛
Կայծակե սուրը ձեռքումս բռնած,
Ես կուզեմ կրծքիցս փնչել հողմ-կրակ,
Ես կուզեմ՝ կյանքը նիռին ոտքիս տակ...*¹⁶

Տարբերակ

Դուք ինձ ասում եք - «Տոկալ սովորիր,
Ու կյանքի [բեռը] խաչը լուռ, անտրտունց տար.
Եվ սուրբ պարտքերի սեղանի առաջ
Դու-խոնարհ սրտով ծունկ չոքիր»:
Դուք [սրբությանն] հնությանն եք անհուն հավատում
Ու նրա անվամբ դուք կամենում եք
Ինձ լռեցնել - ձեր կյանքից տալ ինձ.
Օ՛, ես չեմ ուզում ձեր անմիտ կյանքը,
Ձեր [սրբու<թյունը>] [սրբ<ությունը>] վաղուց բոց չունի:
Ա՛խ, բողեք թոնեմ, թեևս տվեք ինձ.
Մութն անապատը փռեք ոտքիս տակ.
Կատաղած ջրվեժի վայրենի երգը
Ես կուզեմ լսել.
Եվ թող իմ սրտում ջրվեժի նման
Զայրույթ շաչե, սիրտս դղրդա, վրեժս գոչե:
Ես կուզեմ լինել կատաղի - Ոգի՛
Կայծակե սուրը ձեռքումս բռնած,
Ես կուզեմ կրծքիցս փչել հողմ կրակ.
Ես կուզեմ կյանքը նիրհե ոտքիս տակ:
Կայծակե սուրը ձեռքումս բռնած՝
Պատառեն մարդկանց քարե սրտերը.
Ոտքի տակ ձգեն մարդկանց սրտերը.
Թող իմ հայացքը սրտերի արյան
Կարմիր ցուրերով մի լույս ստանա,
Ես կուզեմ ժպտալ վայրենի ժպտով,
Ու իմ աչքերում արցունքը շողա.
Վայրենի, բոցմտ արցունքը...¹⁷

Ավ. Իսահակյանի արխիվում բազմաթիվ են ժողովրդին դեպի հերոս
սամարտ և հերոսացում առաջնորդելու առաքելությանը առաջնորդվող
բանաստեղծի արձակ և չափածո անտիպ էջերը, որոնք առաջին անգամ
կերտարարակվեն Իսահակյանի Երկերի լիակատար ժողովածուի համա
պատասխան հատորներում:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ավ. Իսահակյան, Հիշատակարան, Ե., 1977, էջ 231:
2. Ավիկ Իսահակյան, Ավետիք Իսահակյան. գիտական կենսագրություն, Ե., 2000, էջ 363:
3. Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Ավ. Իսահակյանի փոնդ (այտուհետև՝ ԳԱԹ, ԱԻՖ), N 8 – I, էջ 24:
4. Նույն տեղում, 8 – II, էջ 18:
5. Նույն տեղում, 7 – II, էջ 20:
6. Նույն միտքն է արտահայտված 1896թ. արված հետևյալ գրառման մեջ. «Մենք բոլորս դեպի իրար անտարբեր ենք, անզգա, անզգայակից և իրար հետ ապրում ենք ըով ըովի - առանց իրար ցավով ու ջերմով ցավելու ու ջերմելու... (Հիշատակարան, էջ 223):
7. ԳԱԹ, ԱԻՖ, N 8 – I, էջ 22-25:
8. Ավ. Իսահակյան, Հայկական հարց, Ե., 2005, էջ 21:
9. Հովհ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հ.2, Ե., 1991, էջ 13:
10. ԳԱԹ, ԱԻՖ, N 109 – II:
11. Նույն տեղում, N 7 – II, էջ 15 – 16:
12. А. Белый, Армения, Е., 1985.
13. Հիշատակարան, էջ 205:
14. Նույն տեղում:
15. ԳԱԹ ԱԻՖ, N 8 – I, էջ 5 – 6:
16. Նույն տեղում, N 3 – II, էջ 32:
17. Նույն տեղում, N 1 – II ք, էջ 31: Այս տարբերակի վրա Ավ. Իսահակյանն աշխատել է, ամենայն հավանականությամբ, 1897-ի ամռանը Հաղիճում, քանի որ արխիվային այս միավորի հաջորդ թերթին մա գրի է առել «Ես հյուանցի ըու անունով...» սկսվածքով անտիպ բանաստեղծությունը և այն թվագրել՝ «Հաղիճ, 1897, հուլիս»: